

---

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՅԻ. Գանձեր և տաղեր, *աշխատասիրությամբ Էլեռնորա Հարությունյանի. Երևան, «Նաիրի» հրատ., 2005, 255 էջ:*

Է. Հարությունյանի աշխատասիրած Մխիթար Այրիվանեցու գանձերի ու տաղերի համեմատական-քննական բնագիրը հայ միջնադարյան գրականագիտության պատմության համար նորություն է (պատրաստվել ու հրատարակվել է առաջին անգամ):

Է. Հարությունյանը 1985-ին հրատարակել էր «Մխիթար Այրիվանեցի, կյանքը և գործը» մենագրությունը՝ հարստացնելով հայ միջնադարյան մատենագիրների մասին հետազոտությունների ազգային գանձարանը: Նա Մխիթար Այրիվանեցու գրական, պատմական, մանկավարժական ժառանգության հմուտ գիտակ էր, որը, սակայն, անժամանակ մահվան պատճառով չկարողացավ հրատարակված տեսնել իր երկարամյա ու տքնաջան աշխատանքի արդյունքը՝ Մխիթար Այրիվանեցու գանձերի ու տաղերի ժողովածուն: Է. Հարությունյանի գիրքը լույս աշխարհ եկավ որպես գործի արժեքը կարևորող հիշատակի հատոր: Այն բացվում է Ամենայն հայոց հայրապետի օրհնության գրով, որտեղ դիպուկ ձևով նկատված է գրքի այսօրվա համար ունեցած կենսական արժեքը. «Նվիրված լինելով եկեղեցական մեր տոներին ու մեկնաբանելով դրանց խորհուրդները՝ գանձերը արտահայտում են նաև մեր եկեղեցու դավանանքը, ժամանակի հայ կյանքի իրադարձությունները» (էջ 5):

Գրքում զետեղված է նաև Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Արևշատյանի գնահատանքի խոսքը, որի մեջ շեշտված է հեղինակի «անկասելի ձգտումը՝ լույս աշխարհ բերել հայ հոգևոր մշակույթի անհայտ մատուցները» (էջ 7): Է. Հարությունյանի որդիները՝ Լևոն և Վահագն Սկրտչյանները, իրենց հերթին, գիրքը որակում են որպես Մատենադարանի ու նրա աշխատակիցների հանդեպ սիրո և նվիրումի արտահայտություն:

Մխիթար Այրիվանեցու գանձերի ու տաղերի ժողովածուի լույս աշխարհ գալը, անշուշտ, մեծապես պայմանավորված է նաև հայ միջնադարի նվիրյալ Վ. Դերիկյանի պատրաստակամ օժանդակությամբ, քանզի նա է գրքի պատասխանատու խմբագիրը և վերջինիս ջանքերով է այն կյանքի կոչվել: Գրքի նախաբանում նա ներկայացնում է իր կատարածը և բացատրում, թե ինչու գանձերի ու տաղերի գիտական մեկնությունները քաղված են «Մխիթար Այրիվանեցի» մենագրությունից. «Է. Հարությունյանը, հասցնելով կազմել այս գանձերի բնագրերը և ծանոթագրությունները, դժբախտաբար, չհասցրեց գրել բնագրային նման հրատարակությունների համար ընդունված առաջաբան, ուստի այստեղ հարմար նկատեցինք զետեղել նրա «Մխիթար Այրիվանեցի» մենագրության՝ Այրիվանեցու «Գանձարանին» նվիրված բաժինը, ուր համակողմանիորեն ներկայացված և ըստ խմբագրությունների դասակարգված են թե՛ Գանձարանի ժողովածուները և թե՛ համապատասխան վերլուծության են ենթարկված միջնադարյան այս նշանավոր մատենագրի գանձերը» (էջ 15):

Մխիթար Այրիվանեցիի XIII դարի հայ մատենագրության այն երևելի դեմքերից է, որի գրական ժառանգությունը դեռևս XIX դարում հետաքրքրել է բուսական և եվրոպական հայագիտությանը: 1865 թ. Մարի Բրոսեն նրա պատմությունը թարգմանել է ֆրանսերեն՝ կցելով գիտական մեծարժեք հետազոտություն՝ Ֆրանսիացի հայագետը պատմական խոշոր արժեք է տեսնում հայ մատենագրի երկում, հատկապես վերջինիս հետևյալ բացատրության մեջ դիտել է տալիս մատենագրի պատմաքաղաքական դեպքերի խոր ընկալումը. «Աստ տիրեցին

---

<sup>1</sup> Études sur l'historien arménien Mkhitar d'Airivank, XIII<sup>e</sup> siècle, I et II parties, de la création du monde au commencement de l'ère chrétienne, III partie, jusqu'en 1289 après J.C., B.Ac., t. III 1865, Avril.

Կիլիկիոյ Ռուբինեոնքն, դատ արար Աստուած գրկելոցս, զի Հոռոմն երարձ զմեր թագաւորութիւնն, իսկ Աստուած զերկիր նոցա ետ Հայոց, որք այժմ թագաւորեն ի նմա»<sup>2</sup>: Միւիթար Այրիվանեցու քաղաքական սթափ հայացքը որոշակի երևում է նաև նրա գանձերում, որոնցում հայ եկեղեցու պաշտամունքային գրականության միջոցով հեղինակը զուգակցում է ազգապահպան երկու առաջնահերթ զաղափարներ հավատք և քաղաքական ինքնուրույնություն ու անկախություն: Ահա այս նկատառումով է. Հարությունյանի կատարածը առավել էական ու նշանակալի է դառնում:

Բանասերը գանձերի քննական բնագրերը կազմելիս մանրակրկիտ ուսումնասիրել է իր ձեռքի տակ եղած գրչագիր օրինակները, քաջատեղյակ է հարցի պատմությանը, գիտի, թե ով, երբ և ինչ է ասել հեղինակի գանձերի ու տաղերի մասին: Բավական է միայն նշել, որ հրատարակված 26 գանձերից ու տաղերից 22-ը է. Հարությունյանը հրատարակում է առաջին անգամ:

XIII դարում արդեն հայ բանաստեղծությունն ուներ զարգացման նախանձելի մակարդակ: Բավական է հիշել հանձարեղ Գրիգոր Նարեկացու, Վարդան Անեցու, Հովհաննես Սարկավագ Բմաստասերի, Ներսես Շնորհալու, Ֆրիկի և այլ բանաստեղծների քերթվածները: Ահա այս ավանդույթի մեջ, ինչպես որոշակի պարզ է դառնում է. Հարությունյանի կազմած բնագրերից, Միւիթար Այրիվանեցին անվերապահորեն ունի իր յուրահատուկ տեղն ու դերը: «Միւիթար Այրիվանեցու բանաստեղծությունները և նրանց պատմագրական արժեք»ներածական ծավալուն ուսումնասիրությամբ նախ ներկայացվում է հարցի բանասիրական կողմը: Է. Հարությունյանը վերականգնում է Մ. Այրիվանեցու գանձերի ու տաղերի մեզ հասած ձեռագրական հարստությունը և այն պայմանականորեն բաժանում է երեք խմբի: Առանձնացվում է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 4011 ձեռագիրը, որի նշանա-

կության բացառիկությունը հիմնավորվում է: Մ. Այրիվանեցու գանձերի առանձին միավորները բնութագրված են մանրամասնորեն, մասնագիտական աղյուսակներով:

Է. Հարությունյանն իրավացիորեն ծանրացել է Միւիթար Այրիվանեցու գանձերն արտագրող Գրիգոր Խլաթեցու կազմած ժողովածուի վրա, որն ունի չափածո հիշատակարան: Այդ հիշատակարանը վկայում է Միւիթար Այրիվանեցու գանձերի նկատմամբ հայ միջնադարյան մտածողների բացառիկ վերաբերմունքի մասին.

ԶԱյրիվանուց անուն լրուեալ  
Եւ ընտիր գանձուցս հանդիպեալ,  
Եւ յայնմ արեւ յոյժ ցանկացեալ  
Տեպեան տեղոյս ես տառապեալ... (էջ 27):

Է. Հարությունյանը քննում է բանաստեղծի գանձերի և տաղերի բովանդակությունը, բնութագրում միջնադարյան գրական այդ տեսակի կառուցվածքային առանձնահատկությունները, հավաստում, որ այդ բնագավառում Այրիվանեցին եղել է նորարար: Նա եզրահանգում է. «Գանձերի այս խումբը ոչ թե գանձերի խառը հավաքածու է, այլ տոնական դասավորություն ունեցող մի ամբողջ շարք» (էջ 32): Բանաստեղծությունների մի մասն ունի «Տէր Միւիթար» ծայրակապը:

Միւիթար Այրիվանեցու բանաստեղծական ողջ ժառանգությունը տեղ է գտել XIV-XV դարերի բանաստեղծ և մատենագիր Գրիգոր Խլաթեցու՝ տարբեր հեղինակների գործերից կազմած և մեզ հասած Գանձարաններում: Ինչպես պարզում է Է. Հարությունյանը, Գր. Խլաթեցին երբեմն խմբագրել է Մ. Այրիվանեցու գանձերը:

Բանասերը գանձերի բովանդակությունը քննելիս ներկայացնում է դրանց հեղինակի՝ հայոց պատմության խոր իմացությունը: Այրիվանեցին հաղորդում է պատմական կարևոր փաստեր. «Թարգմանչաց» գանձը ամբողջությամբ, իր բովանդակած փաստացի տվյալներով, կարող է դասվել հայ գրերի գյուտի շուրջը եղած պատմական սկզբնաղբյուրների թվին» (էջ 32):

<sup>2</sup> Մ ի թ ա Ր Ա յ Ր ի վ ա ն ե ց ի. Պատմութիւն Հայոց (ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին), Մոսկվա, 1860, էջ 59:

Աշխատության ծանոթագրություններում վկայվում է, որ գանձերից 16-ի բնագրերը պահվում են Բրիտանական թանգարանի հայկական ձեռագրերի հավաքածուում: Հայտնի է, որ այդ հավաքածուի ցուցակը կազմել է անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիքերը և հրատարակել 1913-ին Լոնդոնում: Կոնիքերի ձեռագրացուցակը, որը հիմնականում անգլերեն լեզվով է և նախատեսված է եվրոպացի հայագետների համար, իր պարունակած ձեռագրերի հարստությամբ, ցավոք, դուրս է մնում Հայաստանում բնակվող հայագետների քննախույզ հայացքից. ոչ ոք չի կարող մեկնել Լոնդոն և քննական բազմաթիվ բնագրերը համեմատել այնտեղի հավաքածուի ձեռագրական փաստերի հետ: Է. Հարությունյանը հիմնականում վկայակոչում է Բրիտանական թանգարանի հայկական հավաքածուի թիվ 54 ձեռագիրը, որը հարուստ

Գանձարան ժողովածու է<sup>3</sup>: Ֆ. Կոնիքերը հայտնում է, որ այդ լավ պահպանված ձեռագիրը գրվել է 1411-ին, ձեռագրի ուղղագրությունն ու կետադրությունը նախնական են (archaic), բայց օ տառը գրված է

բազում էջերում հին ա-ի փոխարեն<sup>4</sup>: Մեր հաշվումներով թիվ 54-րդ ձեռագրում տեղ են գտել Մխիթար Այրիվանեցու 25 բանաստեղծական քերթվածները<sup>5</sup>:

Է. Հարությունյանի կազմած Մխիթար Այրիվանեցու գանձերի ու տաղերի ներկա ժողովածուն բանասիրական օրինակելի աշխատանք է և հիմք է տալիս արդի ու գալիք մասնագետներին ազատորեն ներկայացնելու գանձերի գրականագիտական մեկնությունները:

Մխիթար Այրիվանեցին եղել է հայրենասեր մատենագիր, նրան ոգևորել է Կիլիկյան Հայաստանի անկախ պետականության գոյության փաստը, միաժամանակ իր ծիսական գրականությամբ բանաստեղծը ունեցել է մի լուսավոր նպատակ. քրիստոնեական հավատքը դարձնել հայ ժողովրդի համար պաշտպանական վահան, նրանով հաստատել հասարակական կարգ ու կանոն, ապահովել Մեծ Հայքի խաղաղ ու բարեկեցիկ կյանքի հոգևոր երաշխիքը:

ԱՆԷԻՏԱ ԴՈՒՈՒԽԱՆՅԱՆ

<sup>3</sup> Տե՛ս F. C o n y b e a r e. A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum. London, Oxford University Press, 1913, p. 112-122.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>5</sup> Տե՛ս, ձեռ. 54, թիվ 8, 12, 13, 22, 23, 24, 32, 33, 34, 35, 43, 44, 48, 49, 54, 55, 71, 73, 74, 75, 86, 87, 269, 270, 271: